ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Սերգեյ Խաչատրյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, 2018 թվականի նոյեմբերի 26-28

4. Հրավիրող կողմը

Պատվաստումների և պատվաստանյութերի գլոբալ դաշինք (ԳԱՎԻ):

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն Պատվաստումների և պատվաստանյութերի գլոբալ դաշինքի (ԳԱՎԻ) կառավարման խորհրդի նիստին:

6. Քննարկված թեմաները

Եվրոպական երկրների առողջապահության նախարարությունների մասնակցությունը ընդգրկող այս բարձրաստիճան հանդիպումը լավ հնարավորություն էր տարածաշրջանում առկա համագործակցության ամրապնդման, ընդհանուր քաղաքական ռազմավարության մշակման համար:

Այցի շրջանակներում աշխատանքային հանդիպումներ եղան մի շարք ԳԱՎԻ դաշինքի անդամ-պետությունների առողջապահության ղեկավար անձանց հետ, որոնց հետ քննարկվեցին երկրների միջև առողջապահության բնագավառում համագործակցության ընթացքը, հնարավոր զարգացման ուղիները: Քննարկվեցին նաև ՀՀ առողջապահության նախարարության և ԳԱՎԻ դաշինքի միջև համագործակցության նոր ուղիները, ԳԱՎԻ դաշինքի կողմից տեխնիկական օժանդակության հնարավորությունները:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Նիստի ընթացքում քննարկվեցին կարևոր գործնական նշանակություն ունեցող հարցեր, որոնք ուղղված են վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը, պանդեմիկ գրիպի դեմ պայքարի ուժեղացմանը, երեխաների և դեռահասների առողջության և զարգացման ոլորտում ներդրումների իրականացմանը, ֆինանսական և այլ խնդիրների լուծմանը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու ԳԱՎԻ-ի անդամ-երկրների առաջավոր փորձին, հակապատվաստումային շարժման դեմ գլոբալ պայքարի առաջընթացին, ինչպես նաև ուրվագծել հետագա գործողություններ՝ միջազգային փորձագետների կողմից առաջարկվող ուղղություններով:

Հանդիպման ժամանակ ճշգրտվեցին ՀՀ առողջապահության նախարարության և ԳԱՎԻ դաշինքի միջև համագործակցության հնարավորությունները:

ԳԱՎԻ-ի կառավարման խորհրդի նիստի ընթացքում, ընտրության արդյունքում և Խորհրդի որոշմամբ նշանակվեցի Խորհրդի լիիրավ անդամ՝ 2019թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը:

9. Առաջարկությունները

Առաջարկվեց շարունակել համագործակցությունը և համատեղ ջանքերով պայքար տանել վարակիչ հիվանդությունների դեմ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

03.12.2018